ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության ու փոխադարձ օգնության մասին 1997թ. օգոստոսի 29-ի Պայմանագրի և Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին 2000թ. սեպտեմբերի 26-ի Հռչակագրի դրույթները,

ընդունելով էներգետիկ շուկաների և գազափոխադրման ենթակառուցվածքի զարգացման կարևորությունը, ինչպես նաև գազամատակարարման հուսալիության ապահովման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով Կողմերի պետությունների փոխադարձ շահագրգռվածությունը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության (Հայաստանի Հանրապետություն) գործունեության մեջ,

ցանկություն ունենալով նպաստելու գազի բնագավառում երկարատև փոխշահավետ համագործակցությանը,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Համաձայնագրի առարկան

Կողմերը զարգացնում են երկարատև փոխշահավետ համագործակցություն «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության (Հայաստանի Հանրապետություն) (այսուհետ՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն) գործունեության ապահովման նպատակով:

Հայկական Կողմը մինչև 2014թ. հունվարի 17-ը ապահովում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության (Ռուսաստանի Դաշնություն) (այսուհետ՝ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերություն) միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի կնքումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մինչև 2014թ. հունվարի 31-ը «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության սեփականությանն է հանձնում «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 12 600 000 (տասներկու միլիոն վեց հարյուր հազար) հատ քանակությամբ սովորական անվանական բաժնետոմսերի փաթեթը, որը ընդհանուր կազմում է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության վճարված կանոնադրական կապիտալի 20,0007 տոկոսը՝ 63 333 900 000 (վաթսուներեք միլիարդ երեք հարյուր երեսուներեք միլիոն ինն հարյուր հազար) հայկական դրամ արժեքով, այնպես, որ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը պատկանող «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը կազմեն «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը: «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի նշված փաթեթը որպես սեփականություն «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը անցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել բաժնետոմսերի փաթեթի նշված արժեքը:

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի նշված փաթեթի ձեռքբերումը իրականացվում է ուղիղ վաճառքի ճանապարհով՝ առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող որևէ համաձայնեցումների, համաձայնությունների և թույլտվությունների, ստացման անհրաժեշտության՝ այդ թվում հակամենաշնորհային մարմինների համաձայնեցումների:

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր չափով 100 տոկոսը կազմող «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փաթեթի սեփականության իրավունքի ձեռքբերումից հետո «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը պահպանում է իր կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությունը իրավասու է իրականացնել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի մինորիտար փաթեթի օտարումը իր փոխկապակցված անձանցից յուրաքանչյուրին՝ Հայկական Կողմի նախնական գրավոր համաձայնությամբ, ընդ որում նման համաձայնության ստացումը չպետք է անհիմն մերժվի:

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գույքի և իրավունքների օտարումը իրականացվում է ազատորեն՝ առանց սույն հոդվածի չորրորդ պարբերությունում նշված՝ Հայկական Կողմի նախնական գրավոր համաձայնության ստացման անհրաժեշտության:

Սույն Համաձայնագրի նպատակների համար փոխկապակցված անձինք են համարվում տնտեսական ընկերությունները, որոնց բաժնետոմսերի (բաժնեմասերի) 50 տոկոսից ավելին պատկանում են «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը:

Սույն Համաձայնագրի նպատակների համար որպես բաժնետոմսերի մինորիտար փաթեթ համարվում է բաժնետոմսերի փաթեթը, որը ընդհանուր կազմում է ոչ ավել, քան «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 50 տոկոս հանած մեկ բաժնետոմսը:

Սույն Համաձայնագրի նպատակների համար գույք և իրավունքներ հասկացվում է ցանկացած տեսակի գույքը, ներառելով բայց չսահմանափակվելով, դրանով, դրամական միջոցները, հողամասերը, շենքերը, շինությունները, սարքավորումները, գույքացուցակը, հումքը, արտադրանքը, գույքային և այլ

իրավունքները, որոնք ունեն դրամական գնահատում, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանով, պահանջի իրավունքները, պարտքերը, ինչպես նաև ընկերությունը, նրա արտադրանքը, աշխատանքները և ծառայությունները անհատականացնող (առևտրային նշան, ապրանքային նշաններ, սպասարկման նշաններ) նշանների նկատմամբ իրավունքները, և այլ բացառիկ իրավունքները:

Հոդված 2
Իրավասու մարմիններ

Սույն Համաձայնագրով պարտավորությունների կատարման հսկողությունը իրականացնում են Կողմերի պետությունների իրավասու մարմինները.

Հայկական Կողմից՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը,

Ռուսական Կողմից՝ Ռուսաստանի Դաշնության էներգետիկայի նախարարությունը:

Իրավասու մարմինների փոփոխման դեպքում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին դիվանագիտական ուղիներով:

Հոդված 3
Բնական գազի առաքում

Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ծավալները, ժամկետները, գինը և այլ պայմանները սահմանվում են ինքնուրույն երկարաժամկետ պայմանագրերի կողմեր հանդիսացող «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կամ իր դուստր ընկերության, որի բաժնետոմսերի/բաժնեմասերի 100 տոկոսը պատկանում է «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը, և «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի մասին 2013թ. դեկտեմբերի 2-ի Համաձայնագրի դրույթները:

Ռուսական Կողմը երաշխավորում է «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից բնական գազի առաքումը Հայաստանի Հանրապետություն այն ծավալներով, (սույն հոդվածում նշված բնական գազի առաքման պայմանագրերի համաձայն), որոնք բավական են Հայաստանի

Հանրապետության ներքին կարիքների լրիվ բավարարման համար, առաքվող բնական գազի դիմաց հայկական տնտեսվարող սուբյեկտների կողմից լրիվ և ժամանակին վճարման իրականացման պայմանով, և հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետություն բնական գազի տարանցման հնարավորությունները, ներառյալ գազի փոխադրման օբյեկտների տեխնիկական վիճակը:

Հայկական Կողմը երաշխավորում է, որ Ռուսաստանի Դաշնության տարածքից Հայաստանի Հանրապետություն առաքվող/տրվող բնական գազը, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում սպառման համար, ենթակա չէ արտահանման Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Հայկական Կողմը երաշխավորում է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող բնական գազի դիմաց Հայաստանի Հանրապետության բյուջետային սպառողների կողմից լրիվ և ժամանակին վճարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ սպառողների կողմից դրա դիմաց լրիվ և ժամանակին վճարման աջակցության ապահովմանը:

Հոդված 4
Հայաստանի Հանրապետության գազային համալիրի ենթակառուցվածքի օբյեկտների
և Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի զարգացումը և շահագործումը

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի, գազի ստորգետնյա պահեստավորման օբյեկտների և Հայաստանի Հանրապետության գազային համալիրի ենթակառուցվածքի այլ օբյեկտների, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի զարգացումը իրականացվում է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի հավանությանն արժանացած վերջինիս ներդրումային ծրագրերին համապատասխան և դրանց շրջանակներում՝ նշված օբյեկտների արդիականացման, ժամանակին նորացման ապահովման և մաշվածության աստիճանի նվազեցման նպատակներով:

Կողմերը աջակցում են «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը վերջինիս պատկանող՝ Հայաստանի Հանրապետության գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի, գազի ստորգետնյա

պահեստավորման օբյեկտների և գազային համալիրի ենթակառուցվածքի այլ օբյեկտների, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի շինարարության, վերակառուցման և շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ ներառյալ տեխնիկական սպասարկումը, ախտորոշումը և վերանորոգումը:

Հոդված 5
«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը տիրապետում է Հայաստանի Հանրապետության սպառողների համար նախատեսված՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից առաքվող/տրվող գազի ներմուծման բացառիկ իրավունքով:

Հայկական Կողմը ապահովում է.

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող գազի գնի սահմանումը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից՝ սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելվածով սահմանված կարգի համաձայն,

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող էլեկտրաէներգիայի գնի սահմանումը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից՝ սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված կարգի համաձայն,

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող գազի և էլեկտրաէներգիայի գնի (սակագնի) պարբերական (ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ) վերանայումը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից՝ սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված սկզբունքների պահպանմամբ,

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիա արտադրող հզորությունների առավելագույն հնարավոր բեռնման ապահովմանն ուղղված միջոցառումների համալիրի իրականացումը սեղմ ժամկետներում:

Հայկական Կողմը երաշխավորում է, որ չի օգտագործի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կառավարման հատուկ իրավունքներ, որոնք կխախտեն և/կամ կոտնահարեն տնտեսական ընկերությունների մասին օրենսդրությանը համապատասխան «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրված իրավունքների ծավալը, ներառյալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կառավարման մեջ մասնակցելու հատուկ իրավունքի («ոսկե բաժնետոմսի») գործարկումը:

Հայկական Կողմը երաշխավորում է, որ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սովորական տնտեսական գործունեության մեջ օգտագործվող տեղեկությունները չեն կազմում Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիք:

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փաթեթի սեփականության իրավունքը «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերելուց հետո «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը (նրա իրավահաջորդները) կիրականացնի հիմնական հետևյալ գործունեության տեսակները.

Հայաստանի Հանրապետության տարածք գազի առաքում,

Հայաստանի Հանրապետության տարածքով գազի փոխադրում,

Հայաստանի Հանրապետության տարածքում գազի ստորգետնյա պահեստավորում,

Հայաստանի Հանրապետության տարածքում գազի բաշխում և իրացում,

Հայաստանի Հանրապետության սպառողներին գազի բաշխման և առաքման կարգավարական (օպերատիվ-տեխնիկական) կառավարում,

Հայաստանի Հանրապետության գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի, գազի ստորգետնյա պահեստավորման օբյեկտների և գազային համալիրի ենթակառուցվածքի այլ օբյեկտների, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի օբյեկտների շինարարություն, վերակառուցում և շահագործում, ներառյալ տեխնիկական սպասարկումը, ախտորոշումը և վերանորոգումը, սպասարկման ծառայությունների մատուցումը,

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն և դրա իրացում Հայաստանի Հանրապետության տարածքում և արտահանում:

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը իրավունք ունի իրականացնելու Հայաստանի Հանրապետությունում գազատարերի և դրանց հետ կապված օբյեկտների, ինչպես նաև գազի ստորգետնյա պահեստավորման

օբյեկտների շինարարության և զարգացման օբյեկտների պատվիրատուի գործառույթներ:

Հայկական Կողմը հաստատում է, որ սույն Համաձայնագրի ստորագրման պահին Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի օբյեկտները, գազի ստորգետնյա պահեստավորման օբյեկտները և Հայաստանի Հանրապետության գազային համալիրի ենթակառուցվածքի այլ, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի օբյեկտները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ ակտերի գործող պահանջներին:

Հոդված 6
Ներդրումների երաշխիքներ

Կողմերը ձգտում են ստեղծել բարենպաստ պայմաններ Կողմերի երկրների գազային և էներգետիկ ճյուղերում փոխադարձ ներդրումների համար:

Հայկական Կողմը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և նրա դուստր կազմակերպությունների կողմից ներդրումների հետ կապված վճարումների անխափան փոխանցումը արտերկիր, մասնավորապես.

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և նրա դուստր կազմակերպությունների սկզբնական ներդրումների գումարները և ներդրումների պահպանման և ավելացման համար լրացուցիչ գումարները,

սույն Համաձայնագրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հարկային վճարումների վճարումից հետո եկամուտները, ներառյալ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության դուստր կազմակերպությունների գործունեությունից շահաբաժինները,

ներդրումներին վերաբերվող փոխառությունների մարման նպատակով վճարվող գումարները,

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և նրա դուստր կազմակերպությունների կողմից ստացված գումարները, որոնք կապված են ներդրումների օբյեկտների մասնակի կամ լրիվ վերացման կամ վաճառքի հետ,

սույն հոդվածում նախատեսված փոխհատուցումը:

Հայաստանի Հանրապետության գազի ոլորտի հետագա զարգացման նպատակով Հայկական Կողմը երաշխավորում է.

սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փաթեթը «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության սեփականությանը անցնելուց հետո՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի որոշմամբ վերջինիս վերակազմակերպման՝ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման, վերակազմավորման ձևով, ինչպես նաև կանոնադրական կապիտալի չափի փոփոխման ազատ իրականացման հետագա հնարավորությունը,

ուղղահայաց ինտեգրված ընկերությունների և/կամ ընկերությունների խմբի շրջանակներում գազի ոլորտում տարբեր տեսակի գործունեություններ համատեղելու իրավունքը, ներառյալ գազի արդյունահանումը, մայրուղային և/կամ բաշխիչ գազատարերով գազի փոխադրումը, պահեստարան գազի ներմղումը, պահեստավորումը և արտամղումը, սպառողներին գազի առաքումը, ինչպես նաև կազմակերպությունների կառավարման մարմիններում պաշտոնների համատեղումը,

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և/կամ նրա փոխկապակցված անձանց իրավունքը առաջադրելու Հայաստանի Հանրապետության տարածքում իրեն պատկանող մասնաբաժին ունեցող ձեռնարկությունների կառավարման մարմինների անդամներին՝ այդպիսի մասնաբաժնին համամասնորեն,

Հայկական Կողմը երաշխավորում է, որ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության ներդրումները և նրա եկամուտները (ներդրումների արդյունքում ստացվող գումարները, մասնավորապես, շահույթը, շահաբաժինները, տոկոսները, արտոնագրային և միջնորդական վարձատրությունները, ինչպես նաև ցանկացած այլ վարձատրությունները), ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը կամ նրա փոխկապակցված անձանց պատկանող ցանկացած գույքը օգտվում են Հայաստանի Հանրապետության լիակատար և անվերապահ պաշտպանությունից և չեն կարող ենթարկվել ուղիղ կամ անուղղակի բռնագրավման, ազգայնացման կամ ռեկվիզիցիայի, ինչպես նաև այլ միջոցների, որոնք իրենց հետևանքներով հավասարազոր են բռնագրավմանը, ազգայնացմանը կամ ռեկվիզիցիային:

Եթե սույն Համաձայնագրի պայմաններին հակառակ տեղի կունենա նման բռնագրավում, ազգայնացում, ռեկվիզիցիա կամ գույքից, իրավունքներից կամ շահերից այլ զրկում, ապա Հայկական կողմը պարտավորվում է անհապաղ հատուցել այդպիսի գույքի, իրավունքների կամ շահերի արժեքը ԱՄՆ դոլարով

դրանց լրիվ շուկայական արժեքով, անկախ գնահատողի կողմից սահմանված, բայց ոչ պակաս, քան կատարված ներդրումների չափով, և պայմանով, որ գնահատումը իրականացվում է առանց բռնագրավման, ազգայնացման, ռեկվիզիցիայի կամ գույքից, իրավունքներից կամ շահերից այլ զրկման փաստը և այն բացասական հետևանքների, փաստը հաշվի առնելով, որոնք կարող են ազդեցություն ունենալ գույքի, իրավունքների կամ շահերի շուկայական արժեքի գնահատման վրա:

Նշված բռնագրավման, ազգայնացման, ռեկվիզիցիայի կամ գույքից, իրավունքներից կամ շահերից այլ զրկման հետ կապված արբիտրաժային քննություն սկսելու դեպքում, Հայկական Կողմը պարտավորվում է ենթարկվել արբիտրաժի իրավասությանը, որի քննմանն են փոխանցվելու սույն Համաձայնագրից բխող վեճերը:

Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի գործողության ժամկետում Հայկական Կողմի գործողությունների արդյունքում չի կատարվում հետևյալ պայմաններից որևէ մեկը, Հայկական Կողմը պարտավորվում է «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության պահանջով հետ գնել սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի համապատասխան «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը նախկինում փոխանցված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը՝ 63 333 900 000 հայկական դրամին համարժեք ԱՄՆ դոլար գնով՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից վճարած բաժնետոմսերի փաթեթի արժեքի վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանած ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական փոխարժեքով, ինչպես նաև հատուցել «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության բոլոր վնասները, որոնք կարող են ծագել նրա մոտ նման չկատարման հետևանքով.

«Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությունից (կամ նրա փոխկապակցված անձից) գնվող գազի սպառումը բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի երրորդ պարբերության պայմանի պահպանմամբ,

Սույն Համաձայնագրի ստորագրման պահին Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող կամ վերջինիս կողմից վարձակալված անշարժ գույքի օբյեկտների տակ գտնվող

հողամասերի օգտագործման պայմանների անփոփոխությունը՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները,

Հայաստանի Հանրապետության սպառողների համար նախատեսված՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից առաքվող/տրվող գազի ներկրման «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բացառիկ իրավունքը,

սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով պարտավորությունների կատարումը,

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կառավարման հատուկ իրավունքների չօգտագործումը, որոնք կխախտեն և/կամ կոտնահարեն տնտեսական ընկերությունների մասին օրենսդրությանը համապատասխան «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրված իրավունքների ծավալը, ներառյալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու հատուկ իրավունքի («ոսկե բաժնետոմսի») գործարկումը:

Հոդված 7
Կայունացման վերապահում

Հայկական Կողմը երաշխավորում է, որ մինչև 2043թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ սույն Համաձայնագրից բխող կամ սույն Համաձայնագրի հետ կապված ծագող՝ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների՝ սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ իրավունքները և շահերը ենթակա չեն փոփոխումների, լրացումների, հետ կանչման կամ կրճատումների՝ առանց Ռուսական Կողմի նախնական համաձայնության:

Հայկական Կողմը երաշխավորում է, որ մինչև 2043թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության ապագա որևէ օրենքներ, որոշումներ, հրամանագրեր և այլ նորմատիվ իրավական ակտեր չեն փոփոխի և/կամ չեղյալ հայտարարի և/կամ այլ կերպ ոտնահարի սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքները և շահերը (ներառյալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական պարտավորությունների ավելացումը և/կամ տնտեսական վիճակի վատթարացումը, պետական բյուջետային և արտաբյուջետային նպատակային հիմնադրամներ հատկացումների նորմատիվների ավելացումը, արտարժույթի

առքի վրա տուրքերի սահմանումը, նոր հարկերի և/կամ տուրքերի գործարկումը կամ նմանատիպ ազդեցություն ունեցող գործող հարկերի և/կամ տուրքերի դրույքների ավելացումը, գործունեության ցանկացած արգելքների և/կամ սահմանափակումների գործարկում):

2013թ. հունվարի 1-ից «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության համար շահութահարկի դրույքը սահմանվում է 20 տոկոսի չափով: Անորոշ անձանց շրջանակի համար որոշակի ամսաթվից Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ սույն պարբերության մեջ նշված շահութահարկի դրույքի հետ համեմատած ավելի ցածր շահութահարկի դրույք սահմանելու դեպքում «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության շահույթը նշված սահմանված ամսաթվից կհարկվի այդպիսի նվազեցված շահութահարկի դրույքով:

Եթե վերը նշվածին հակառակ, մինչև 2043թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության որևէ նորմատիվ իրավական ակտ կփոփոխի, չեղյալ կհայտարարի կամ որևէ այլ կերպ կոտնահարի սույն Համաձայնագրով «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքները և շահերը, ապա կկիրառվեն մինչ այդպիսի նորմատիվ իրավական ակտի ընդունման պահը գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պայմանները:

Հոդված 8
Կողմերի համագործակցությունը

Կողմերը համաչափ կերպով ընդլայնում և խորացնում են համագործակցությունը գազի ոլորտում, խթանում են հետագա ինտեգրացումն ու տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների ստեղծումը:

Կողմերը զարգացնում են երկարատև փոխշահավետ համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

համագործակցություն նոր տեխնոլոգիաների մշակման և զարգացման, գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորային աշխատանքների համատեղ իրականացման, գազի ոլորտի օբյեկտների տեխնիկական պահանջների և շահագործման կանոնների ստանդարտավորման ոլորտում,

գազի խնայողության և էներգախնայողության ոլորտում համատեղ ծրագրերի մշակում և իրականացում,

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության մայրուղային գազատարերի համակարգերի աշխատանքը կանոնակարգող միասնական համաձայնեցված նորմատիվային և տեխնիկական քաղաքականության վարում, գործող ստանդարտների և տեխնիկական պայմանների միասնականացում գազի ոլորտում, ներառյալ՝ չափագիտական ապահովումը:

Հայկական Կողմի ներկայացուցիչը իրավունք ունի որպես առանց ձայնի իրավունքի դիտորդ ներկա գտնվել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհրդի նիստերին՝ ստացված տեղեկատվության գաղտնապահությունը պահպանելու պայմանով:

Բնական գազի փոխադրման օբյեկտներում վթարային իրավիճակների ծագման դեպքում՝ Կողմերի պետությունների կազմակերպությունները միմյանց փոխադարձ օգնություն են ցուցաբերում բնական գազի հոսքերի կարգավորման համար, ինչպես նաև մասնագետներով, տեխնիկայով և նյութատեխնիկական պաշարներով՝ վթարի արագ վերացման և բնական գազի առաքման վերականգնման նպատակով:

Կողմերը փոխանակվում են սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությանն առնչվող համապատասխան նորմատիվային իրավական ակտերի տեքստերով:

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին է տրամադրում իր տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք կապված են գազի ոլորտում համագործակցության զարգացման հետ՝ պայմանով, որ այդ տեղեկատվությունը չունի գաղտնապահական բնույթ և նրա տրամադրումը չի հակասում այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի պետության օրենսդրությանը:

Հոդված 9
Վեճերի լուծումը

Որևէ Կողմի և մյուս Կողմի պետության տնտեսվարող սուբյեկտների միջև վեճերը, որոնք վերաբերում են սույն Համաձայնագրի կիրառմանը և դրանից բխող պարտավորությունների կատարմանը, լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե 6 ամիսների ընթացքում այդ բանակցությունների արդյունքում վեճը չի լուծվում, ապա այդ վեճը ենթակա է լուծման ad hoc միջազգային արբիտրաժում՝ 2010թ. խմբագրության ՅՈՒՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոնակարգին համապատասխան: Արբիտրաժային դատարանի նիստը կգումարվի

ք.Ստոկհոլմում և կվարվի ռուսերեն լեզվով: Արբիտրաժային վեճի վերաբերյալ դատարանի որոշումը կհամարվի վերջնական և պարտադիր համապատասխան Կողմի և տնտեսվարող սուբյեկտների համար:

Ընդ որում՝ Կողմերը, անկախ իրենց պետությունների օրենսդրությունների դրույթներից, ընդունում են սույն Համաձայնագրի կիրառմանը և դրանից բխող պարտավորությունների կատարմանը առնչվող որևէ Կողմի և մյուս Կողմի պետության տնտեսվարող սուբյեկտների միջև ցանկացած վեճը ինչպես վեճ առևտրային իրավահարաբերություններից՝ ըստ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և ի կատարման մասին Միավորված Ազգերի Կազմակերպության 1958 թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստի:

Սույն Համաձայնագրի մեկնաբանության և կիրառման վերաբերյալ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Եթե նման եղանակով վեճը չի կարգավորվում բանակցությունների մեկնարկի ամսաթվից վեց ամիսների ընթացքում, ապա ցանկացած Կողմի պահանջով այն փոխանցվում է այդ նպատակով միջնորդ դատարանի քննությանը.

Միջնորդ դատարանը ստեղծվում է յուրաքանչյուր առանձին դեպքի համար, այդ նպատակով յուրաքանչյուր Կողմ նշանակում է միջնորդ դատարանի մեկական անդամի՝ միջնորդ դատարանի դիտարկման վերաբերյալ ծանուցման ստացման ամսաթվից երկու ամիսների ընթացքում: Այնուհետև, դատարանի այդ երկու անդամները իրենց նշանակման ամսաթվից մեկ ամսվա ընթացքում ընտրում են երրորդ երկրի քաղաքացու, որը երկու Կողմերի համաձայնությամբ նշանակվում է միջնորդ դատարանի նախագահ:

Եթե սույն հոդվածի հինգերորդ պարբերությունում նշված ժամկետում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, ապա Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության պարագայում ցանկացած Կողմ կարող է դիմել Միջազգային դատարանի նախագահին՝ այդ նշանակումները իրականացնելու խնդրանքով: Եթե Միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Կողմերից մեկի երկրի քաղաքացին կամ ուրիշ այլ պատճառներով չի կարող կատարել նշված խնդրանքը, ապա անհրաժեշտ նշանակումների կատարումը առաջարկվում է Միջազգային դատարանի նախագահի տեղակալին: Եթե Միջազգային դատարանի նախագահի տեղակալը նույնպես հանդիսանում է Կողմերից մեկի երկրի քաղաքացի կամ ուրիշ այլ պատճառներով չի կարող կատարել նշված խնդրանքը, ապա անհրաժեշտ նշանակումների կատարումը առաջարկվում է Միջազգային դատարանի ավագության առումով նրան հաջորդող անդամին, որը չի հանդիսանում Կողմերից ոչ մեկի երկրի քաղաքացի:

Միջնորդ դատարանը իր որոշումը ընդունում է ձայների մեծամասնությամբ: Այդ որոշումը հանդիսանում է վերջնական և պարտադիր Կողմերի համար: Յուրաքանչյուր Կողմ կրում է միջնորդ դատարանում իր կողմից նշանակված անդամի գործունեության և միջնորդ դատարանում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Միջնորդ դատարանի նախագահի գործունեության հետ կապված, ինչպես նաև այլ ծախսերը Կողմերը կրում են հավասար չափով: Սակայն, միջնորդ դատարանը իր որոշման մեջ կարող է նախատեսել, որ Կողմերից որևէ մեկը կրելու է ծախսերի մեծ մասը, և այդպիսի որոշումը պարտադիր կլինի երկու Կողմերի համար:

Միջնորդ դատարանը ինքնուրույն է սահմանում իր աշխատանքի կարգը:

Հոդված 10
Անձեռնմխելիությունից հրաժարում

Սույն Համաձայնագրի կատարման շրջանակներում իրականացվող գործունեության և դրա իրականացումից ծագող վեճերի դեպքում՝ Կողմերը սույնով անվերապահորեն և անդառնալիորեն հրաժարվում են ցանկացած անձեռնմխելիություններից, որոնցից իրենք օգտվում են միջազգային իրավունքով կամ որևէ պետության օրենսդրությամբ իր և իր սեփականության (ներառյալ՝ ցանկացած եկամուտներ, ակտիվներ, գույք) նկատմամբ: Անձեռնմխելիություններից նշված հրաժարումը ներառում է (սակայն չի սահմանափակվում) ցանկացած պետության ազգային դատարանների կամ միջազգային դատական (արբիտրաժային) ատյանների իրավասությունից անձեռնմխելիությունից, մինչև դատական (արբիտրաժային) վճռի կայացումը (այդ թվում այնպիսի միջոցներից, ինչպիսիք են բռնագանձման դիմելը կամ սեփականության հանդեպ կալանքը) հարկադիր միջոցների անձեռնմխելիությունից, դատական (արբիտրաժային) վճռի կայացումից հետո (այդ թվում այնպիսի միջոցներից, ինչպիսիք են բռնագանձման դիմելը, կալանքը կամ վճռի կատարումը) հարկադիր միջոցների անձեռնմխելիությունից հրաժարումները:

Անձեռնմխելիություններից սույն հրաժարումը վնաս չի պատճառում Կողմերի արտոնություններին և անձեռնմխելիություններին, որոնցից նրանք օգտվում են միջազգային իրավունքի համաձայն՝ իրենց դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հաստատությունների, միջազգային կազմակերպություններին առընթեր իրենց ներկայացուցչությունների կամ միջազգային կազմակերպությունների մարմիններում կամ միջազգային կոնֆերանսներին պատվիրակությունների և նրանց առնչվող անձանց նկատմամբ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության և
Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև
կնքված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական
ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և
հետագա գործունեության պայմանների վերաբերյալ
Համաձայնագրի

Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրացվող բնական գազի և էլեկտրաէներգիայի գների սահմանման կարգ

1. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագները որոշվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից հաստատված «Գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկայով» և «Էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդաբանությամբ» սահմանված կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքների համաձայն՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի (այսուհետ՝ «Համաձայնագիր») և սույն Հավելվածի պայմանները:

2. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող բնական գազի ու էլեկտրաէներգիայի սակագները որոշվում են որպես հետևյալ բաղադրիչների գումար.

1) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանին բնական

գազի ձեռք բերման գին՝ ընդունված «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կամ նրա դուստր ընկերության, որի 100% բաժնետոմսերը/բաժնեմասերը պատկանում են «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը, և «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված ժամանակի համապատասխան պահին գործող Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման պայմանագրի համաձայն:

2) Հայաստանի Հանրապետության սպառողներին բնական գազի իրացման և էլեկտրաէներգիայի արտադրության ու առաքման համար «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ծախսերի մեծությունը (որը ներառում է արտադրության, փոխադրման/հաղորդման, շահագործման և պահպանման, բաշխման, կարգավարման (գազամատակարարման համակարգի օպերատոր) ծախսերը), ինչպես նաև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումների հետգնումը և տնտեսապես հիմնավորված շահույթը: Ընդ որում, ծախսերի տվյալ մեծությունը դրա սահմանման յուրաքանչյուր ժամանակահատվածում հաշվարկվում է որպես ներքոշարադրյալ բաղադրիչների գումարը բաժանած տվյալ ժամանակահատվածի համար համապատասխանաբար՝ հազար խորանարդ մետրով արտահայտված գազի և կիլովատ×ժամով արտահայտված էլեկտրաէներգիայի պլանավորված առաքման ծավալին.

Գործառնական ծախսերի գումար, այդ թվում՝ նյութական, նորոգման, սեփական կարիքների համար և տեխնոլոգիական կորուստների գազի ծախսերի, անձնակազմի աշխատավարձի, էլեկտրաէներգիայի, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության վարչական ծախսերի, Հայաստանի Հանրապետության սպառողներին գազի առաքման և էլեկտրաէներգիայի արտադրության ու առաքման այլ ծախսերի («ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բյուջեի մի շարք ծախսային հոդվածները գազի և էլեկտրաէներգիայի առաքման ծախսերին ուղղակի վերագրման անհնարինության դեպքում, դրանց առանձնացումը այդպիսի ընդհանուր հոդվածներից իրականացվում է համապատասխան գործունեության տեսակին վերաբերվող հիմնական միջոցների մասնաբաժնի չափով).

Գազի առաքմանը և էլեկտրաէներգիայի արտադրությանը ու առաքմանը վերաբերվող «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության հիմնական միջոցների մաշվածության հատկացումների մեծություն.

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից վճարվող շահութահարկի և բոլոր այլ հարկերի, վճարների ու տուրքերի, այդ թվում՝ մաքսային, հաշվարկային մեծություն՝ գազի գնման, Հայաստանի Հանրապետության սպառողներին գազի առաքման և էլեկտրաէներգիայի արտադրության ու առաքման ընթացքում.

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության ներդրումների եկամտաբերության ներքին նորման (այսուհետ՝ ԵՆՆ) տարեկան 9 տոկոսի՝ իրական արտահայտությամբ (առանց սղաճի հաշվառման) չափով ապահովող դրույքի չափի և Հայաստանի Հանրապետության սպառողներին գազի առաքման գործունեությանը վերաբերվող «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների արտադրյալ.

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության ներդրումների ԵՆՆ տարեկան 9 տոկոսի՝ իրական արտահայտությամբ (առանց սղաճի հաշվառման) չափով ապահովող դրույքի չափի և էլեկտրաէներգիայի արտադրության ու առաքման գործունեությանը վերաբերվող «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների արտադրյալ:

3. Հայկական Կողմը ապահովում է.

1) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության ներդրումների ԵՆՆ տարեկան 9 տոկոս՝ իրական արտահայտությամբ (առանց սղաճի հաշվառման) չափն ապահովող՝ ներքին շուկային էլեկտրաէներգիայի առաքման սակագնի սահմանում,
2) արտահանման համար առավելագույն հնարավոր էլեկտրաէներգիայի առաքման ծավալ՝ առկա էլեկտրահաղորդման գծերով,
3) «Իրան-Հայաստան» 400 կՎ ԷՀԳ-ին միանալու նախապատվություն այն շահագործման հանձնելուց հետո՝ արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի առաքման համար:

4. Սույն Համաձայնագրի նպատակների համար.

1) սույն Համաձայնագրի 2.4 և 2.5 կետերով սահմանված շահութաբերության դրույքների մեծությունները պետք է ապահովեն «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության բոլոր ներդրումների ԵՆՆ՝ սկսած 2004թ. հունվարի 1-ից, տարեկան 9 տոկոսի՝ իրական արտահայտությամբ (առանց սղաճի հաշվառման) չափով, հաշվարկի 20 տարվա ժամանակահատվածի համար: Նշված ԵՆՆ-ի արժեքին չհասնելու դեպքում, շահութաբերության դրույքների մեծությունները պետք է վերանայվեն պահանջվող ԵՆՆ ապահովելու նպատակով՝ Համաձայնագրի Կողմերի միջև համաձայնեցված դրամական հոսքերի հաշվարկի մոդելի հիման վրա: Այդ նպատակով Համաձայնագրի Կողմերը յուրաքանչյուր տարի իրականացնում են համաձայնեցված մոդելի ճշգրտում,

2) բոլոր հաշվարկներն իրականացվում են հայկական դրամով,

3) բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների սահմանման ժամանակ օգտագործվող մեծությունների որոշման համար ելակետային տվյալների աղբյուր է հանդիսանում համապատասխան կարգով հաստատված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բյուջեն (ֆինանսական պլանը)՝ մշակված հաշվարկների իրականացման պահին գործող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան,

4) զուտ ակտիվները որոշվում են որպես կուտակված մաշվածությունը հանած հիմնական միջոցների սկզբնական արժեքի և շրջանառու ակտիվների մեծության գումար: Ընդ որում, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության հիմնական միջոցների սկզբնական արժեքը՝

Հայաստանի Հանրապետության սպառողներին գազի առաքման գործունեությանը վերաբերվող մասով, 01 հունվարի 2013թ. դրությամբ կուտակված մաշվածությունը հանած կազմում է (311) միլիոն ԱՄՆ դոլար,

էլեկտրաէներգիայի արտադրության և առաքման գործունեությանը վերաբերվող մասով, 01 հունվարի 2013թ. դրությամբ կուտակված մաշվածությունը հանած կազմում է (386) միլիոն ԱՄՆ դոլար,

5. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության իրավունք ունի տարեկան մեկ անգամից ոչ ավելի իրականացնելու ընկերության սեփականությունը և նրա դուստր ընկերությունների սեփականությունը հանդիսացող՝ ըստ «գազի առաքում» և «էլեկտրաէներգիայի արտադրություն և առաքում» գործունեության տեսակների հիմնական միջոցների վերագնահատում,

6. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության սպառողներին իրացվող բնական գազի և էլեկտրաէներգիայի համար սահմանված սակագների գործողության յուրաքանչյուր ժամանակահատվածի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից իրականացվում է տվյալ մեծության վերահաշվարկ՝ հաշվի առնելով «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կատարած ծախսերի, Հայաստանի Հանրապետության սպառողներին բնական գազի ու էլեկտրաէներգիայի առաքման ծավալների, Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարկման արժեքի փաստացի տվյալները,

7. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բյուջեի (ֆինանսական պլանի) ելակետային տվյալների հիման վրա ստացված բնական գազի ու էլեկտրաէներգիայի սակագների և կատարված ծախսերի, բնական գազի ու էլեկտրաէներգիայի առաքման ծավալների փաստացի տվյալների միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության համար բացասական տարբերության առկայության դեպքում, բնական գազի ու էլեկտրաէներգիայի սակագների մեծությունները հաջորդ ժամանակաշրջանում ճշգրտվում են առաջացած տարբերության մեծության չափով,

8. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բյուջեի (ֆինանսական պլանի) ելակետային տվյալների հիման վրա ստացված բնական գազի ու էլեկտրաէներգիայի սակագների և կատարված ծախսերի, բնական գազի ու էլեկտրաէներգիայի առաքման ծավալների փաստացի տվյալների միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության համար դրական տարբերության առկայության դեպքում, նշված տարբերության արդյունքում առաջացած «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության լրացուցիչ շահույթը բաշխվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված առանձին համաձայնագրով սահմանված կարգով:

Կողմերի գործառույթները իրականացնելիս, ինչպես նաև միջազգային իրավունքի համաձայն պետությունների ղեկավարներին տրամադրված անձեռնմխելիություններին:

Հոդված 11
Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ միջպետական ընթացակարգի կատարման վերաբերյալ դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը ժամանակավապես կիրառվում է նրա ստորագրման պահից 30 օր անց:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք հանդիսանում են նրա անբաժանելի մասը և ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով:

Կատարված է ք. Երևանում 2013թ. դեկտեմբերի 2-ին երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ ունեն հավասարազոր ուժ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝